ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2025 թվականի N 569 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱ-ԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 1176-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի «Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 1176-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման՝

ա. 1-ին կետը «համաձայն» և հավելվածը վավերապայմանների «Հավելված» բառերից հետո լրացնել «N 1» բառերով,

բ. 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1 Հաստատել սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:».

2) որոշման հավելվածի՝

ա. 5-րդ կետի 4-րդ ենթակետը «ձևի» բառից հետո լրացնել «և խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի արդյունքում «Սպանդանոցների կառավարում» միասնական էլեկտրոնային հարթակից գեներացված N 5 ձևի» բառերով,

բ. 10-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) ծրագրի N 2 կամ N 3 ձևերում առկա չէ խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը, կամ լրացված է այնպիսի համար, որը չի համապատասխանում «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային տեղեկատվական համակարգում առկա տվյալներին, կամ շահառուի կողմից ներկայացված սպանդի վերաբերյալ N 5 ձևի անասնաբուժական վկայականում նշված խոշոր եղջերավոր կենդանու նույնականացման անհատական համարը չի համապատասխանում ծրագրի N 2 և N 3 ձևերում լրացված նույնականացման անհատական համարին.»,

գ. 10-րդ կետի 8-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ ենթակետով.

«9) խոշոր եղջերավոր կենդանիների տեղափոխման N 1 կամ խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի վերաբերյալ N 5 ձևերի անասնաբուժական վկայականների պատճենները բացակայում են։».

3) որոշումը լրացնել N 2 հավելվածով՝ համաձայն հավելվածի։

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ ապահովել սպանդանոցների տեղակայման վայրի համայնքների հետ ծրագրի շրջանակներում ստացված դիմումների ուսումնասիրության և մոնիթորինգի իրականացման համար նախատեսված գումարների տրամադրման պայմանագրերի կնքումը։

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություններ «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և լրացում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող

միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություն-ներ և լրացումներ կատարելու մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, որն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող 30-րդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ